Գավառի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ «Սարուխանի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար

«Սարուխանի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, չափահաս, ՀՀ գործունակ այն քաղաքացիները, ովքեր ունեն՝

1/ բարձրագույն կրթություն

2/ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով վերապատրաստում և նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք /հավաստագիր/, ձեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ՝առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N224-Ն որոշման 9-րդ կետով սահմանված պահանջները

3/ իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն /ՀՀ Սահմանադրություն, Կրթության մասին ՀՀ օրենք, «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, Աշխատանքային օրենսգիրք, Գնումների մասին ՀՀ օրենք, ՊՈԱԿ-ների մասին ՀՀ օրենք, համապատասխան ոլորտի ՀՀ օրենսդրություն և այլ իրավական ակտեր/

4/ տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն

5/ ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

6/ աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ, ենթակաների հետ վարման անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն

7/ առնվազն մեկ օտար լեզվի իմացություն

Տնօրենի համար դիմորդները պետք է բավարարեն «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով սահմանված չափորոշիչներին:

Մրցույթը կկայանա 2023 թվականի նոյեմբերի 30-ին ժամը 15^{00}-ին, Գավառի համայնքապետարանի ավագանու սենյակում /հասցե՝ Գր. Լուսավորչի 12/

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում.

2) 1 լուսանկար 3X4 չափսի.

3) նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիր.

քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության

մասին.
4) ինքնակենսագրություն.
5)անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի /արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող
ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները/.
6)տեղեկանք մշտական բնակության վայրից
7) հրապարակված հոդվածներից կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /դրանց առկայության դեպքում.
8) մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը
հաստատող այլ փաստաթղթով:
Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 10^{00}-ից մինչև 17^{00}-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից, Գավառի
համայնքապետարանում /ք. Գավառ Գրիգոր Լուսավորչի 12/:
Մրցույթների անցկացման վայրի, օրվա և ժամի հնարավոր փոփոխությունների մասին կհայտնվի լրացուցիչ՝
մրցույթից առնվազն մեկ շաբաթ առաջ:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2023 թվականի նոյեմբերի 20-ն է: